
**ԲԱՌՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՈՐՈՇԻՉՆԵՐԻ
ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ**

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ա. Մ.

Մի կադապարը փոխակերպել մյուսին նշանակում է տվյալ միտքը քերականական մի ձևից փոխադրել մի այլ ձևի՝ հաշվի առնելով նյութի հաղորդման նպատակը, միջավայրը և ներգործուն լինելը: Փոխակերպումը պայմանավորված է հաղորդողի անհատական վերաբերմունքով՝ լեզվական ճաշակով ու հմտություններով: Փոխակերպման ժամանակ միշտ չէ, որ ստեղծվում են լիովին հավասարաթեք տարբերակներ¹: Միշտ չէ, որ հնարավոր է փոխակերպել քերականական մեկ կառույցը մյուսին: Փոխակերպման հետևանքով ստեղծվում են նաև ոճական ոչ ճիշտ և լեզվին անհարիր ձևեր:

Նախ տանք բառով արտահայտված որոշիչները, ապա դրանք փոխակերպենք համապատասխան ստորադաս նախադասության, եթե որոշիչը փոխակերպելի է: Հայերենում իբրև որոշիչ կիրառվում են *գոյականները, ածականները, դերանունները, թվականները, բայերը և մակբայները*:

Գոյականով որոշիչ: Երբ գոյականը գործածվում է որպես որոշիչ, վերցվում է այդ գոյականի իմաստի այս կամ այն կողմը, այսինքն՝ գոյականի ցույց տված առարկայի որևէ հատկանիշը՝ մեկ այլ առարկա բնորոշելու համար²: Գոյականով որոշիչները կարող են արտահայտվել ուղղական, տրական, բացառական, գործիական հոլովներով:

1. *Ուղղական հոլովով*. ա) Մի խումբ որոշիչներ որևէ կողմով նմանեցվում են իրենց որոշյալներին և արտահայտում դրանց որակական հատկանիշը: Այսպիսի որոշիչները չեն փոխակերպվում: Ու ես ծա՛նրը-ծա՛նրը խոսքը իջեցնում եմ, Դնում պատվանդանին *քար լռության* (ՍՊ, 92):

Քար լռություն որոշիչը ինչ-որ կերպ նմանեցնում ենք որոշյալին. *քար* գոյականը վերցնում ենք «ամուր» հատկանիշի փոխարեն, *քար* գոյականը փոխարինում է որակական այդ հատկանիշը ցույց տվող բառին և կատարում նրա պաշտոնը: Այսպիսի գոյական որոշիչները համարժեք են և փաստորեն փոխարինում են գոյականից կազմված ածականներին (*քարե լռություն*)³:

¹ *Ջահուկյան Գ., Խղաթյան Ֆ.*, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 1988, էջ 153:

² *Աբրահամյան Ա.*, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Ե., 1965, էջ 108-109:

³ Այս հարցի մասին մանրամասն տե՛ս *Աբրահամյան Ա.*, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 288-289: *Առաքելյան Վ.*, Հայերենի շարահյուսություն, հ. 1, Ե., 1958, էջ 236:

բ) *Ուղղականով* իբրև որոշիչ կարող են կիրառվել հասարակ անունները հատուկ անունների համար⁴: Այսպիսի որոշիչները փոխակերպվում են: Ասում են, որ դավը նյութել էր *արքայազն Տիրիթը* (ԶՄ, 32): Ասում են, որ դավը նյութել էր Տիրիթը, որ *արքայազն էր*: Արքունիքը *պատանդ Գնելին* թույլ է տվել գալ հայրենիք (ԶՄ, 122): Արքունիքը Գնելին, *որը պատանդ էր*, թույլ է տվել գալ հայրենիք:

գ) *Ուղղական հոլովով* դրված հատուկ անունները որոշիչ են դառնում հասարակ անունների համար և չեն փոխակերպվում, ինչպես՝ Ու թընդում է *Թըմուկ բերդը* և աղմուկից խընդության... (ԹՀ, 191):

Մի խումբ հասարակ անուններ, որոնք ցույց են տալիս պաշտոն կամ մասնագիտություն, որոշիչ են դառնում հասարակ անունների համար: Այսպիսի որոշիչները փոխակերպվում են: Գլխավոր նախադասության մեջ ավելանում է հարաբերյալ, իսկ փոխակերպված տարբերակի ստորոգելին հոդ է ստանում: Օրինակ՝ Թագավորը մի քանի վայրկյան լուռ անցուդարձ արեց նրանց առաջ և ապա *առաջնորդ իշխանին* դառնալով՝ ասաց... (Մ, 187): Թագավորը մի քանի վայրկյան լուռ անցուդարձ արեց նրանց առաջ և ապա դառնալով (*այն*) իշխանին, *որը առաջնորդն էր*, ասաց...: Թորգոմն ուզեց նորից ստուգել, թե դա իրո՞ք *կառավարիչ իշխանի* տունն է ... (ԶՄ, 82): Թորգոմն ուզեց նորից ստուգել, թե դա իրո՞ք (*այն*) իշխանի տունն է, *որը կառավարիչն է*:

2. *Տրական հոլովով*. ա) Որոշիչ են դառնում տեղի, ժամանակի, նյութի և այլ իմաստ արտահայտող գոյականների զգալի մասի տրական հոլովաձևերը⁵: Այսպիսի որոշիչները չեն փոխակերպվում: Ի՞նչ բան է, օրինակ, մաքուր օդը, *դաշտի կանաչը, հովտի առվակը, անտառի գույքը*... (Մ, 7):

բ) Մի խումբ որոշիչներ, որոնք, դրվելով տրական հոլովով, արտահայտում են որոշյալների որակական հատկանիշը, ունեն նաև պատկանելության նշանակություն, որի պատճառով էլ չեն փոխակերպվում: Լուսինը նազելով սահում էր պարզ երկնականարի վրա և թափում էր իր *արծաթի շողերը* նիրհած անտառների մեջ... (Ը, 68):

3. *Բացառական հոլովով*. Որոշիչ է դառնում հատկապես նյութի և ծագման բացառականը: Նա լուռ ճեմում էր պարտեզում՝ *մետաքսից զգեստը* հագին:

Նշենք, որ սրանք իրենց որոշչային կիրառությունը ստացել են հարակատար դերբայով արտահայտված որոշիչների զեղչման հետևանքով⁶: Այս տիպի որոշիչները փոխակերպվում են, սակայն ոճական անհարթությունը վերականգնելու համար կարելի է վերականգնել զեղչված հարակատար դերբայը, որի գործառույթն անցել է բացառական հոլովով դրված բառին: Իսկ

⁴ *Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ.*, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե., 1976, էջ 180-181:

⁵ Նույն տեղում, էջ 181:

⁶ Նույն տեղում, էջ 184:

գլխավոր նախադասության մեջ կարող է հարաբերյալ ավելանալ: Նա լուռ ձևում էր պարտեզում (*այն*) զգեստը հագին, *որը մետաքսից էր (կարված)*:

4. *Գործիական հոլովով*: ա) Գործիական հոլովով դրված մի շարք որոշիչներ նյութի իմաստ ունեն. նյութի ու ծագման բացատրականի պես նրանք ցույց են տալիս նյութ, որից մի որևէ բան է պատրաստված: *Մեղրով կարկանդակը* առողջարար և օգտակար քաղցրավենիք է: *Կարկանդակը, որը մեղրով է (պատրաստված)*, առողջարար և օգտակար քաղցրավենիք է: *Շոկոլադով սուրճը* անուշ բուրմունք ունի: *Սուրճը, որը շոկոլադով է (պատրաստված)*, անուշ բուրմունք ունի:

Այս կառույցները ևս որոշչային կիրառություն են ստացել հարակատար դերբայով արտահայտված որոշիչների գեղջման հետևանքով: Փոխակերպելիս վերականգնում ենք հարակատար դերբայը, վերանում է ոճական անհարթությունը:

բ) Գործիական հոլովով դրված մի շարք որոշիչներ բնութագրում են առարկան և այն տարբերակում նույն տեսակի մյուս առարկաներից: Այս տիպի որոշիչները փոխակերպվում են ոճական որոշակի անհարթությամբ: Թագավորը նստեց մտածումների մեջ և *մորուսով ծնոտը* հենեց աջին (ԶՄ, 105): Թագավորը նստեց մտածումների մեջ և ծնոտը, *որը մորուսով էր (պատված)*, հենեց աջին: Շուտով խաչքարի շուրջը հավաքվեցին գյուղի տղամարդիկ՝ ալեհեր ու երիտասարդ, նույնիսկ պատանիներ, *ցնցոտիներով ծերունիներ* (ԽՄ, 13): Շուտով խաչքարի շուրջը հավաքվեցին գյուղի տղամարդիկ՝ ալեհեր ու երիտասարդ, նույնիսկ պատանիներ, ծերունիներ, *որոնք ցնցոտիներով էին*:

Ածականով որոշիչ: 1. *Որակական ածականով*. ա) Դրական աստիճանով դրված որոշիչները օրինաչափորեն փոխակերպվում են: Սակայն Արշակին հաճո չեղան նրա խոսքի *խորհրդավոր եղանակն ու շողոքորթ շեշտը* (ԶՄ, 105): Սակայն Արշակին հաճո չեղան նրա խոսքի եղանակը, *որը խորհրդավոր էր*, ու շեշտը, *որը շողոքորթ էր*:

Մի մոռացկոտ անձրև

Ու մի երկչոտ քամի

Դաշնագիր են կնքել մեկմեկու հետ... (ՄՊ, 103):

Մի անձրև, որը մոռացկոտ է,

Ու մի քամի, որը երկչոտ է,

Դաշնագիր են կնքել մեկմեկու հետ...:

բ) Բաղդատական աստիճանով դրված որոշիչները փոխակերպվում են: Այնուհետև ստորագրել էին *ավելի փոքր նախարարները* (ԶՄ, 269): Այնուհետև ստորագրել էին նախարարները, *որոնք ավելի փոքր էին*: Կարծես կա *ավելի ազնիվ, ավելի բարձր գործ*, քան իմը (Շ, 95): Կարծես կա գործ, *որը ավելի ազնիվ, ավելի բարձր է*, քան իմը:

գ) *Գերադրական աստիճանով*: Պահանջի *խստագույն խոսքերով* (ԶՄ, 76): Պահանջի *այնպիսի* խոսքերով, *որոնք խստագույնն են*:

Եվ զուր մի հարցրու,

Թե ո՞րն է եղել իմ *ամենամեծ սերը* (ՄՊ, 356):

Եվ զուր մի հարցրու,

Թե ո՞րն է եղել իմ *այն* սերը, *որն ամենամեծն է...*:

Այս տիպի կառույցները հնարավոր է փոխակերպել, եթե դրանք փոխանվանաբար են գործածվում: Փոխակերպված տարբերակի ստորոգելին որոշիչ հոդ է ստանում, իսկ գլխավոր նախադասության մեջ հարաբերյալ է ավելանում:

Փոխանվանաբար գործածված ածականի բացառական հոլովով դրված որոշիչի մի տեսակ կա, որով արտահայտվում է բաղդատման իմաստ: Այսպիսի որոշիչները ցույց են տալիս որոշյալի բաղդատական կամ գերադրական աստիճանը: Երբ բացառականը եզակի է, արտահայտում է բաղդատական աստիճանը, երբ հոգնակի է՝ գերադրականը⁷: Միննույն բառով կազմված այսպիսի կապակցությունները սերտորեն կապված են և մի ամբողջություն են ներկայացնում, իսկ որոշիչ և որոշյալի հարաբերությունն աստիճանաբար մթագնում է⁸: Այդ է պատճառը, որ այսպիսի որոշիչները չեն փոխակերպվում: Ու երբ անցնեն մեր առջևից Կըտրիճները պայազատ, Ընտրի՛ր, զարկի՛ր ձեռքիդ խնձորն *Անհաղթներից անհաղթին...* (ԹՀ, 252):

2. *Հարաբերական ածականով* որոշիչները արտահայտում են առարկայի ծագումը, կազմությունը, բաղադրությունը, պատկանելությունը, այս կամ այն տեղին, ժամանակին և առհասարակ մի բանի նրա հատուկ լինելը: Երբ հարաբերական ածականով դրված որոշիչը ցույց է տալիս առարկայի տեղը, ժամանակը կամ որևէ բանի հատուկ լինելը, փոխակերպվում է ոճական որոշակի անհարթությամբ: *Գիշերային խավարը* տիրել էր աշխարհին (Ը, 57): Խավարը, *որը գիշերային էր*, տիրել էր աշխարհին: *Գարնանային առավոտը* խոստանում էր պայծառ և արևոտ օր (ԲԱ, 21): Առավոտը, *որը գարնանային էր*, խոստանում էր պայծառ և արևոտ օր:

Հարաբերական ածականով դրված մի խումբ որոշիչներ ցույց են տալիս որևէ նյութից պատրաստված լինելը կամ նմանեցվում այդ նյութին: Այսպիսի որոշիչները չեն փոխակերպվում: Ոչ մի *երկայթա դուռ* և ոչ մի պահակ աշտարակի գլխին (ԲԱ, 3):

Ածականի կրկնությամբ կազմվում են որոշիչներ, որոնք իմաստային նրբերանգ են հաղորդում որոշյալին, սաստկացնում վերջինիս նշանակությունը: Այս կառույցները փոխակերպելիս ոճական տգեղ ձևեր են ստեղծվում: Ես իմ *մթի՛ն-մթի՛ն ն կարոտն* այնպես գիտեմ,

Ինչպես կույրը գիտի բնակարանն իր հին... (ՄՊ, 143):

Հմմտ. Ես իմ կարոտը, *որը մթի՛ն-մթի՛ն ն է*, այնպես գիտեմ,

⁷ *Առաքելյան Վ.*, նշվ. աշխ., էջ 223:

⁸ Նույն տեղում, էջ 238:

Ինչպես կույրը գիտի բնակարանն իր հին...:

Ուղղական հոլովով դրված մի խումբ գոյականների կրկնությամբ կազմվում են ածականներ, որոնք գործածվում են որպես որոշիչներ: Այսպիսի որոշիչները փոխակերպվում են ոճական անհարթությամբ.

...Լեոնաշխարհն ի վար թափթփում էին

Մով մանուշակներ,

Որ *փշուր-փշուր երկինքներ* էին (ԴՎ, 86):

...Մով մանուշակներ,

Որ երկինքներ էին, *որոնք փշուր-փշուր էին*:

Հընչեց փողը: Ահա *փունջ-փունջ*

Դրրանիկներ, նաժիշտներ... (ԹՀ, 251):

Հընչեց փողը: Ահա դրրանիկներ,

Նաժիշտներ, *որոնք փունջ-փունջ էին...*:

Թվականով որոշիչ: Թվականը առարկայի հատկանիշը ցույց տվող այլ խոսքի մասերից էապես տարբերվում է իր իմաստային բնույթով: Եթե ածականով արտահայտված որոշչով բնորոշվում է համապատասխան առարկան այս կամ այն հատկանիշով, ապա առարկայի անվանը թվական ավելացնելիս չեն բնորոշվում այդ առարկայի ո՛չ բովանդակությունը, ո՛չ ձևը: Այս պատճառով էլ բոլոր առարկաները, անկախ իրենց բնույթից, կարող են ունենալ միևնույն թիվը, մինչդեռ ածականով արտահայտված բնորոշման հետ այս կարգի փոփոխություններ հնարավոր չէ կատարել, քանի որ ածականով արտահայտված հատկանիշը առարկայի համար բնութագրող արժեք ունի: Թվականները որևէ գաղափար չեն տալիս համապատասխան առարկաների էության, հատկությունների մասին: Դրանք արտահայտում են միայն առարկաների որոշակի քանակը⁹:

1. *Քանակական թվականով*. ա) Բացարձակ.

Երկու որբեր,

Քուր ու ախպեր,

Կորած գնում են հեռու ... (ԹՀ, 261):

Նրան հետևեցին *երկու որդիները* և *տասներկու թիկնապահները...* (ԶՄ, 93):

Այսպիսի թվական որոշիչները, որոնք դրվում են անձ ցույց տվող որոշյալների վրա, փոխակերպվում են ոճական անհարթությամբ, իսկ ստորոգելին որոշիչ հոդ է ստանում: Առաջին օրինակում գլխավոր նախադասության մեջ կարող է հարաբերյալ ավելանալ, իսկ որոշյալը՝ որոշիչ հոդ ստանալ: *Այն որբերը, որոնք երկուսն էին...*: Նրան հետևեցին որդիները, *որոնք երկուսն էին*, և թիկնապահները, *որոնք տասներկուսն էին*:

⁹ Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1969, էջ 80, 97:

Երբ թվական որոշիչները դրվում են ժամանակ և իր ցույց տվող որոշյալների վրա, չեն փոխակերպվում: *Քսանհինգ օր* առաջ Գանձասարի Եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսի սուրհանդակը եկել էր Հալիձոր (ԽՍ, 4):

Մոտավոր քանակը կարող է արտահայտվել քանակական թվականով, որը արտահայտվում է հարադրական բարդությամբ: Այսպիսի որոշիչները չեն փոխակերպվում, օրինակ. Եվ իրոք. նիզակավոր ձիավորների մի խումբ, թերևս *մի քսան-քսանուհինգ հոգի*, ցրված անցնում էին անտառի եզերքով... (ՁՍ, 101):

բ) Կոտորակային. այսպիսի որոշիչները չեն փոխակերպվում: Ճանապարհի *մեկ երրորդ մասն* արդեն անցել էին:

2. *Բաշխական*, որոնք նույնպես չեն փոխակերպվում, օրինակ. Յուրաքանչյուր փուլում մրցմանը մասնակցում էին *հինգական մարզիկներ*:

3. *Դասական թվականով որոշիչներ*: Իշխանաժողովի *երրորդ օրը* Կամսարականի ապարանքում խաղաղություն էր (ՁՍ, 62):

Եթե գլխավոր նախադասության մեջ հարաբերյալ ավելացնենք, իսկ փոխակերպված նախադասության ստորոգելին որոշիչ հոդ ստանա, ապա այսպիսի որոշիչները կփոխակերպվեն ոճական որոշակի անհարթությամբ: Իշխանաժողովի *այն օրը, որը երրորդն էր*, Կամսարականի ապարանքում խաղաղություն էր:

Մի խումբ թվականներ (*հարյուր, հազար, միլիոն*) ցույց են տալիս անորոշ մեծ քանակություն և իմաստի սաստկացման նպատակով կարող են կրկնվել: Այսպիսի որոշիչները չեն փոխակերպվում: Իր նեղ հունի մեջ զալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են *հազար զամփռներ* (ԲՍ, 3):

Դերանունով որոշիչ: Դերանունը անվանողական արժեք չունի. չի անվանում ո՛չ առարկան, ո՛չ էլ նրա որևէ հատկանիշը, այլ ակնարկում է այն որևէ հարաբերությամբ և ունի ընդհանրական, չտարբերակված իմաստ: Դերանվան գլխավոր հատկանիշը տարբեր խոսքի մասերին (գոյական, ածական, թվական, մակբայ) հարաբերակից լինելն է: Դերանուններով արտահայտված որոշիչները ակնարկում են որևէ հատկանիշ որևէ հարաբերությամբ: Այդ է պատճառը, որ դերանվամբ արտահայտված որոշիչները չեն փոխակերպվում:

1. *Ցուցական դերանունով*: Մի գիշեր նա ինձ առաջարկեց կատարել մի *այդպիսի զբոսանք*... (Ը, 68):

2. *Որոշյալ դերանունով*: Ու *ամբողջ դահլիճը* գրեթե միաբերան հառաչեց (Ն-Դ, 103):

3. *Ժխտական դերանունով*: Ոչ *մի ոտնաձայն*, մարդկային ոչ *մի կանչ*, ոչ *մի վրնջյուն* (ՁՍ, 57):

4. *Անորոշ դերանունով*: Եվ թվում է, թե ընկել եմ *Ինչ-որ աշխարհ*՝ խորհրդավոր ու բազմաբույր (ՄՊ, 134) :

5. *Հարցահարաբերական դերանունով*: *Ի՞նչ աչքերով* եմ նայել սրանց, Որ ու ր էլ գնամ, չեմ մոռանում... (ԷԳ, 67):

Որոշիչները կարող են արտահայտվել նաև դերանունների կրկնությամբ՝ իմաստի սաստկացման նպատակով.

Եւ *ամեն, ամեն, ամեն լուսաբաց*

Բերում է նոր կյանք

Եվ հույսեր անմար:

Դերբայով որոշիչ: 1. *Ենթակայականով*. Ենթակայական դերբայով արտահայտված որոշիչները չեն փոխակերպվում: Միննույն ժամանակ գոգնոցով սրբում էր *թափվող արցունքը* (ԲԱ, 33):

2. *Հարակատարով*. Այս որոշիչները կարելի է փոխակերպել ոճական անհարթությամբ, քանի որ ստեղծվում են ոճական տգեղ ձևեր.

Ալեկոծվում էր *անտառը հուզված*

Ու *ոսկեգոծված գլուխն* օրորում... (ՄՀ, 202):

Ու օրորում էր գլուխը, *որը ոսկեգոծված էր...*:

3. *Անորոշ դերբայի տրական հոլովով*. Այս որոշիչները չեն փոխակերպվում: *Նկատվելու երկյուղից* ծվարեցին խիտ ծառերի արանքում (ԶԱ, 76):

Սակայն «*ուտելու հաց*» և «*խմելու ջուր*» կապակցությունները կարելի է փոխակերպել ոճական անհարթությամբ. *ջուր, որը խմելու է, հաց, որը ուտելու է:*

Սակբայով որոշիչներ: 1. *Ձևի մակբայով որոշիչները փոխակերպվում են ոճական անհարթությամբ*: Կինը թեյի պատրաստություն էր տեսնում, անխոս և *արագ շարժումներով* (ԲԱ, 8): Կինը թեյի պատրաստություն էր տեսնում, անխոս և *շարժումներով, որոնք արագ էին*: Կուշտ կերած մեր ձիերը *արագ քայլերով* բարձրանում էին քարոտ արահետը (ԲԱ, 21): Կուշտ կերած մեր ձիերը *քայլերով, որոնք արագ էին*, բարձրանում էին քարոտ արահետը...

2. *Չափ ու քանակի մակբայով. որոշիչները չեն փոխակերպվում*: Ամառանոցն *ավելի ազատություն* տվեց նրանց ընտանեկան կյանքին... (Դ, 65):

Այսպիսով՝ կարելի է ասել, որ ըստ փոխակերպելիության՝ գոյություն ունի շարահյուսական կառույցների երեք հնարավոր տարբերակ՝ ա) օրինաչափորեն փոխակերպվող, բ) ոճական անհարթությամբ փոխակերպվող, գ) չփոխակերպվող:

Օրինաչափորեն փոխակերպվողի դեպքում ներկայացվող միտքը առանց որևէ խոչընդոտի քերականական մեկ ձևից փոխանցվում է մեկ այլ ձևի: Միննույն գործառույթի երկու տարբերակներից որևէ մեկի կիրառումն արդեն պայմանավորված է հաղորդողի անհատական վերաբերմունքով, որը բխում է միննույն միտքը հակիրճ ու սեղմ կամ ավելի մանրամասն ու ծավալուն ներկայացնելու անհրաժեշտությունից:

Ոճական անհարթությամբ փոխակերպվող կաղապարները ոճական առումով կազմում են տգեղ ձևեր, որոնք հարիր չեն մեր լեզվին և գործնականում կիրառելի չեն:

Չփոխակերպվող որոշիչների պարագայում պարզապես անհնար է քերականական մեկ ձևը փոխակերպել մեկ այլ ձևի, քանի որ այս դեպքում ոչ միայն ոճական, այլ նաև քերականական առումով ճիշտ ձևեր չեն կազմվում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԲԱ - Բակունց Ակսել, Ալպիական մանուշակ, Ե., 1969:
 ԴՎ - Դավթյան Վահագն, Ծննդավայր, Ե., 1988:
 ԶՍ - Զորյան Ստեփան, Հայոց բերդը, Ե., 1959:
 ԷԳ - Էմին Գևորգ, Այս տարիքում, Ե., 1968:
 ԹՀ - Թումանյան Հովհաննես, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1969:
 ԽՍ - Խանգաղյան Սերո, Մխիթար Սպարապետ, Ե., 1988:
 Մ - Մուրացան, Գևորգ Մարգարետունի, Ե., 1970:
 Ն-Դ - Նար-Դոս, Մեր թաղը, Ե., 1962:
 Շ - Շիրվանզադե, Պատմվածքներ, Ե., 1986:
 ՍՀ - Սահյան Համո, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1975:
 ՍՊ - Սևակ Պարույր, Եղիցի լույս, Ե., 1992:
 Բ - Բաֆֆի, Պատմվածքներ և վիպակներ, Ե., 1986:

ТРАНСФОРМАЦИЯ ВЫРАЖЕННЫХ СЛОВОМ ОПРЕДЕЛЕНИЙ В ПРИДАТОЧНОЕ ПРЕДЛОЖЕНИЕ

МХИТАРЯН А.М.

Резюме

В армянском языке в качестве определения употребляются существительное, прилагательное, местоимение, числительное, глагол и наречие.

Формы этих определений можно трансформировать в сложноподчиненные предложения, если это трансформирующиеся формы.

В соответствии с этим различаются три типа трансформации – закономерно трансформирующиеся определения, стилистически неудачно трансформирующиеся определения и не трансформирующиеся. Каждый из этих типов проявляется в рамках придаточного предложения.

В случае закономерно трансформирующихся определений одна грамматическая форма беспрепятственно трансформируется в другую, и эти две грамматические формы являются синтаксическими синонимами.

Стилистически неудачно трансформирующиеся формы в армянском языке не употребляются. Не трансформирующиеся определения невозможно трансформировать из одной грамматической формы в другую.